

Ծնողքնե՛ր, ուսուցիչնե՛ր, աշխատանոցներու վարիչնե՛ր, հսկեցէ՛ք պատանիներու աչքերուն: Եթէ՛ ձեր տեսողութիւնը զոյգ աչքերով կամ մէկ աչքով միայն բնականոն չէ, կամ եթէ՛ զոյգ կամ մշուշոտ կը տեսնէ՛ք, եթէ՛ տպուածք ձեզի կը թուի ցատկաբար, պարոզ, եթէ՛ դուք կը նշմարէ՛ք «ճանճեր» (սև բիծեր ու կէտեր) կամ բաց տեղեր բառերուն շարքին մէջ, եթէ՛ լամպարի շուրջը կը նշմարէ՛ք բազմա-րանգ բոլորակներ, ինչպէս ծիածանը, եթէ՛ ձեր աչքը կարգալու կամ կարելու ատեն կը ցատկէ, մինչև անգամ առանց որ և է ցաւ զգալու, դիմեցէ՛ք բժիշկին:

Եթէ՛ ձեր կողերը քիչ մը կը կպչին առտունները, եթէ՛ դուք կը զգաք աչքին մէջ ջերմութիւն կամ աւաղ, եթէ՛ ձեր աչքերը կ'արցունքո-տին կամ հովի մը պատճառաւ կը լեցուին արցունքով, մի միտք այդ վիճակին մէջ ամիսներով:

Շատ երախաներ արկածով կը զրկուին իրենց մէկ աչքէն: Հեռո՛ւ մկրատէն, գրչածայրէն, թողուցէ՛ք վտանգաւոր խաղերը, — նետ, ձգել, ատրճանակ կամ հրացան գործածել, քար նետող մեքենաներու մօտ կենալ:

Եթէ՛ ձեր աչքին մէջ մտած է ածուխի փոքրիկ կտոր մը կամ աւաղի հատիկ մը, մի չփէ՛ք աչքը, որովհետև հատիկը կրնայ վիրա-ւորել աչքին մակերեսը. այլ բռնեցէ՛ք արտեւանունքներէն, և բաժ-նեցէ՛ք կողը աչքին պտուղէն, արցունքները կրնան սահեցնել հա-տիկը: Հակառակ պարագային, աչքը պահեցէ՛ք գոց, մինչև այն ա-տեն՝ երբ կարելի կ'ըլլայ շրջել այն կողը, որուն կ'պած է օտար հատիկը:

ԲԺ. Յ. ՏԵՐԴԱԽԹԵԱՆ

ԳՐԱՆՈՍՄԱԿԱՆ

ԹԻՐԱՆՏԱԽՈՐՆԵՐԸ. — Գրեց՝ ՅՈՔԹ. Պ. ՔՈԼՈԼԵԱՆ, փարիզ 1929

30 էջնոց փոքրիկ գրքոյկ մը, որ կարեւոր և բազմաթիւ ծանօ-թութիւններ կու տայ թոքախտին պատճառներուն, ախտաճանաչու-թեան, զգուշական միջոցներուն մասին, ինչպէս նաև գործնական թելադրանքներ՝ անոնց որ վարակուած են, կամ անոնց որ հիւան-դաւական աշխատանք կը կատարեն: Այս է ամբողջ բո-վանդակութիւնը: Թոքախտին մասին յօդուածներ ու գրքոյկներ շատ են գրուած մեր մէջ, — սակայն այս գրքոյկը կարծես նոր բան մը կ'ըսէ: Մանաւանդ որ հիւանդութիւնը ներկայացնելու ձեւը ինքնա-տիպ է և այնքան յստակ, այնքան պայծառ, որ ժողովուրդին համար կրնայ լաւագոյն առաջնորդը նկատուիլ: Ոչինչ վարդապետական ու խրթին, ոչինչ մասնագիտական ու անհասկնալի, այն ահաւոր հիւան-դութեան մասին, որ այնքան զոհեր կը խլէ մեր ժողովուրդէն, մաս-նաւորաբար այս վերջին գաղթականի կեանքի ընթացքին, մեծ քա-ղաքներու և գաղթականներու մէջ:

Ահա թէ ինչո՞ւ ջերմապէս կը յանձնարարենք այս գրքոյկը մեր ժողովուրդին անխտիր:

Դ. Ա.